

Վճարային հաշվեկշիռը և ազգային հաշիվները

Հայաստանի առևտրային հաշվեկշիռը մշտապես բացասական է եղել, և «առևտրային հաշվեկշիռ»/«ՀՆԱ» հարաբերակցությամբ Հայաստանն առավել անբարենպաստ վիճակում գտնվող երկրներից է:

Հայաստանի արտաքին պարտքը վերջին տասնամյակում արագորեն ընդլայնվում է, այնինչ տնտեսական աճի տեմպը դանդաղել է:

Հայաստանից եկամուտների արտահոսքը շարունակաբար սաստկանում է, և, միևնույն ժամանակ, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը սահմանափակվել է:

Այս և համանման միտումներն ինչպե՞ս են ազդում Հայաստանի երկարաժամկետ աճի հեռանկարի վրա և ինչպիսի՞ն պետք է լինի կառավարության քաղաքականությունը:

Նմանատիպ հարցերին խելամիտ պատասխաններ տալու համար նախ անհրաժեշտ է հստակ պատկերացնել նշված հասկացությունների էությունը և փոխառնչությունը:

Այդ պատճառով այս գլխում մեր նպատակն է.

- նկարագրել արտաքին տնտեսական գործարքների և ազգային եկամտի առնչությունը,
- վերլուծել ապրանքների ու ծառայությունների առևտրի կապը ակտիվների առևտրի հետ,
- պարզել վճարային հաշվեկշռի կազմման սկզբունքները:

Վճարումների շրջապտույտը փակ տնտեսությունում

Փակ տնտեսությունը բնութագրվում է վճարումների փակ շրջապտույտով:

Վերջնական ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման վրա կատարված ծախսերի հանրագումարն անվանում ենք «համախառն ազգային ծախս»՝ «ՀԱԾ» (կամ «ներքին կլանում»): Այն ներառում է երեք բաղադրիչ՝ մասնավոր սպառումը՝ C, ներդրումները՝ I, և հանրային սպառումը՝ G.

$$ՀԱԾ = C + I + G$$

Փակ տնտեսությունում այդ ծախսերը կարող են կատարվել միայն երկրի ներսում արտադրված ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման վրա: Իսկ երկրի ներսում արտադրված վերջնական ապրանքների ու ծառայությունների արժեքը «համախառն ներքին արդյունքն» է (ՀՆԱ):

Այսպիսով՝ փակ տնտեսությունում, քանի որ ներմուծումը բացակայում է, ծախսերը կարող են կատարվել միայն տեղական արտադրության ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման վրա: Ավելին՝ փակ տնտեսությունում, քանի որ արտահանումը նույնպես բացակայում է, ապա արտադրված ապրանքներն ու ծառայությունները ձեռք են բերվում միայն տեղական ռեզիդենտների կողմից:

Արդյունքում՝ փակ տնտեսությունում «համախառն ազգային ծախսը» հավասար է «համախառն ներքին արդյունքին»:


Իսկ թողարկումն ինչպե՞ս է հարաբերում եկամտին: Ընդհանուր դեպքում, երկրում արտադրված պատրաստի ապրանքների ու ծառայությունների իրացումից ստացված եկամուտը հանդիսանում է արտադրությանը մասնակցած բոլոր ռեսուրսների վարձատրությունը: Հետևաբար՝ փակ տնտեսությունում այդ եկամուտն ամբողջությամբ վճարվում է տեղական ռեսուրսներին, քանի որ արտադրությանը մասնակցում են միայն տեղական ռեսուրսները: Այսինքն՝ փակ տնտեսությունում «համախառն ներքին արդյունքը» հավասար է «համախառն ազգային եկամտին» (ՀԱԵ):

Այսպիսով՝ փակ տնտեսությունում պատրաստի ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման ընդհանուր ծախսը՝ «համախառն ազգային ծախսը», հավասար է թողարկման արժեքին՝ «համախառն ներքին արդյունքին», որն էլ հավասար է արտադրության տեղական գործոնների ընդհանուր եկամտին՝ «համախառն ազգային եկամտին»:

Արդյունքում՝ փակ տնտեսությունում ծախսերը հավասար են թողարկմանը, ինչն էլ հավասար է եկամտին:

Գծանկար 14-1:

Վճարումների շրջապտույտը փակ տնտեսությունում



«Համախառն ազգային եկամուտն» իր հերթին օգտագործվում է «համախառն ազգային ծախսերը» ֆինանսավորելու համար: Վերջին հանգամանքը գծ. 1-ում արտացոլված է հետադարձ սլաքի միջոցով, որը ՀԱՆ-ից ուղղված է դեպի ՀԱԾ-ը: Դրանով վճարումների շրջապտույտն ամբողջանում է:

Վճարումների շրջապտույտը բաց տնտեսությունում

Բաց տնտեսությունում վճարումների շրջապտույտը ներհոսքի և արտահոսքի բազմաթիվ աղբյուրներ ունի:

Դարձյալ սկսենք «համախառն ազգային ծախսից»՝ $C + I + G$:

ՀԱԾ և ՀՆԱ: Բաց տնտեսությունում ծախսերի մի մասը կատարվում է արտերկրյա արտադրանք ձեռք բերելու վրա: Այսինքն՝ ՀԱԾ-ի մի մասն օգտագործվում է արտերկրից ապրանքներ ու ծառայություններ ներմուծելու համար: Միևնույն ժամանակ, այլ երկրների ռեզիդենտներն իրենց ծախսերի մի մասն օգտագործում են մեր երկրից ապրանքներ ու ծառայություններ արտահանելու համար:

Քանի որ ներմուծված ապրանքներն արտադրվել են արտերկրում, ապա «համախառն ներքին արդյունքում» ներմուծումը չի ներառվում: Այսինքն՝ «համախառն ներքին արդյունքը» ստանալու համար «համախառն ազգային ծախսից» պետք է հանենք ներմուծումը:

Միևնույն ժամանակ, պետք է գումարենք արտահանումը, քանի որ արտահանված ապրանքները, թեպետ գնվել են այլ երկրների ռեզիդենտների կողմից, բայց արտադրվել են մեր երկրում: Արդյունքում՝ արտահանումը «համախառն ազգային ծախսում» չի ներառվում, քանի որ արտահանում է այլ երկրների ռեզիդենտների ծախսը, բայց ներառվում է «համախառն ներքին արդյունքում», քանի որ արտահանում է տեղական արտադրությունը:

Ապրանքների ու ծառայությունների արտահանման (X) և ներմուծման (M) տարբերությունն «առևտրային հաշվեկշիռն» է.

$$\text{Առևտրային հաշվեկշիռ} = X - M$$

Այսպիսով՝ «համախառն ներքին արդյունքը» ստանալու համար «համախառն ազգային ծախսին» պետք է գումարենք «առևտրային հաշվեկշիռը».

$$\underbrace{C + I + G}_{\text{համախառն ազգային ծախս}} + \underbrace{X - M}_{\text{առևտրային հաշվեկշիռ}} = \text{ՀՆԱ}$$


«Առևտրային հաշվեկշիռն» այլ կերպ կկոչենք «գուտ արտահանում»:

Հայաստանում առևտրային հաշվեկշիռը բացասական է, այդ պատճառով Հայաստանի ՀՆԱ-ն «համախառն ազգային ծախսից» փոքր է: Այսինքն՝ Հայաստանի ՀԱԾ-ի նշանակալի մասն օգտագործվում է արտերկրում արտադրված ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման վրա:

Բաց տնտեսությունում ՀԱԾ-ը, սովորաբար, հավասար չէ ՀՆԱ-ին: Բացառություն է այն դեպքը, երբ առևտրային հաշվեկշիռը հավասարակշռված է, այսինքն՝ արտահանումը հավասար է ներմուծմանը: Այդ դեպքում ՀԱԾ-ը հավասար է ՀՆԱ-ին, քանի որ առևտրային հաշվեկշիռը հավասար է զրոյի:

Գծանկար 14-1:

Վճարումների շրջապտույտը բաց տնտեսությունում



ՀՆԱ և ՀԱԵ: Բաց տնտեսությունում ՀՆԱ-ն հավասար չէ ՀԱԵ-ին, քանի որ երկրի ՀՆԱ-ի մի մասը թողարկվում է օտարերկրյա ռեսուրսների կողմից, և հետևաբար՝ համապատասխան եկամուտը ստանում են օտարերկրյա ռեսուրսները: Այդ դեպքում ասում ենք, որ երկիրը ներմուծում է գործոնային ծառայություններ, որի դիմաց վճարում է գործոնային եկամուտներ:

Օրինակ՝ Երևանի կոնյակի գործարանի ստացած եկամուտը պատկանում է գործարանի սեփականատիրոջը՝ ֆրանսիական Պեռնո Ռիկար ընկերությանը: Գործարանի թողարկման արժեքը ներառվում է Հայաստանի ՀՆԱ-ում, բայց եկամուտը ներառվում է ոչ թե Հայաստանի, այլ Ֆրանսիայի «համախառն ազգային եկամտում» (1998թ-ին Կոնյակի գործարանը Պեռնո Ռիկարին վաճառվեց 30մլն դոլ-ով, ինչը կազմում էր Պեռնո Ռիկարի այդ տարվա շահույթի 10%-ը):

Բաց տնտեսությունում ՀՆԱ-ն հավասար չէ ՀԱԵ-ին նաև այն պատճառով, որ երկրի ռեսուրսների մի մասը գտնվում է արտերկրում և մասնակցում է արտերկրի ՀՆԱ-ի արտադրությանը: Այդ դեպքում ասում ենք՝ երկիրն արտահանում է գործոնային ծառայություններ և փոխարենը ստանում է գործոնային եկամուտներ:

Օրինակ՝ երբ հայկական որևէ շինարարական ընկերություն կարտոֆիլի պահեստ է կառուցում Մոսկվայում, ապա թողարկումը (պահեստի շինարարությունը) ներառվում է Ռուսաստանի ՀՆԱ-ում, իսկ եկամուտը՝ Հայաստանի ՀԱԵ-ում:

Նմանապես, երբ ոմն Եվա արտագնա աշխատանքի է մեկնում Ռուսաստան, ապա նրա ստեղծած արդյունքը ներառվում է Ռուսաստանի ՀՆԱ-ում, բայց ստացած եկամուտը՝ Հայաստանի ՀԱԵ-ում:

Գործոնային եկամուտների ներհոսքի և արտահոսքի տարբերությունը կանվանենք զուտ գործոնային եկամուտ.

$$\text{Զուտ գործոնային եկամուտ} = \text{Գործոնային եկամտի ներհոսք} - \text{Գործոնային եկամտի արտահոսք}$$

Այսպիսով՝ «համախառն ազգային եկամուտը» ստանալու համար «համախառն ներքին արդյունքին» պետք է գումարենք «զուտ գործոնային եկամուտը».

$$\text{ՀԱԵ} = \text{ՀՆԱ} + \text{Զուտ գործոնային եկամուտ}$$

Բնականաբար, երբ գործոնային եկամտի ներհոսքը գերազանցում է արտահոսքին, ապա զուտ գործոնային եկամուտը դրական է, և ՀԱԵ-ն ՀՆԱ-ից մեծ է: Օրինակ՝ Հայաստանում զուտ գործոնային եկամուտները դեռևս դրական են, թեպետ վերջին տարիներին եկամտի ներհոսքը կրճատվում է, իսկ արտահոսքն աճում է:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից առաջարկվող նոր մեթոդաբանությամբ՝ «գործոնային եկամուտ» տերմինը կոչվում է «առաջնային եկամուտ»:

ՀԱԵ և ՀԱՏԵ: Բաց տնտեսությունում անօրինվող եկամուտը, սովորաբար, տարբերվում է աշխատած եկամտից: Պատճառը նվիրատվությունն ու մարդասիրական օգնությունն են, որոնք կոչվում են ընթացիկ տրանսֆերտներ:

Այսպես՝ երբ Հայաստանից Ռուսաստան մեկնած ու վաղուց հայրենիքն ու ընտանիքը մոռացած «այրը» մի օր որոշում է 50 դոլ. ուղարկել չափահաս դարձած դստերը, դա Հայաստանի համար ընթացիկ տրանսֆերտի ներհոսք է:

Հայաստանը մարդասիրական օգնություն, սովորաբար, ստանում է: Բայց երբեմն էլ տրամադրում է: Օրինակ՝ 2005թ-ին Հայաստանը 200 հզ դոլ-ի օգնություն տրամադրեց ԱՄՆ-ում կատրինա ջրհեղեղից տուժածներին: Դա Հայաստանի համար ընթացիկ տրանսֆերտի արտահոսք էր:

Ընդհանուր դեպքում, «համախառն ազգային տնօրինվող եկամուտը» հավասար է «համախառն ազգային եկամտի» և զուտ ընթացիկ տրանսֆերտների (ԸՏ) հանրագումարին.

$$\text{Զուտ ընթացիկ տրանսֆերտներ} = \text{Ստացված ԸՏ} - \text{Տրամադրված ԸՏ}$$

$$\text{ՀԱՏԵ} = \text{ՀԱԵ} + \text{Զուտ ընթացիկ տրանսֆերտներ}$$

ԱՄՆ-ի նոր մեթոդաբանությունը «ընթացիկ տրանսֆերտը» կոչվում է «երկրորդային եկամուտ»:

ՀԱՏԵ-ն արտահայտում է երկրի ռեզիդենտների կողմից տնօրինվող եկամտի ընդհանուր մեծությունը:

Ընթացիկ հաշիվ: Ընթացիկ հաշիվը ներառում է երկրի և մնացյալ աշխարհի միջև ապրանքների, ծառայությունների ու եկամուտների բոլոր հոսքերը: Այդ հոսքերը ներառվում են ընթացիկ հաշվում՝ անկախ նրանից՝ դրանք շուկայական գործարքների, թե տրանսֆերտների արդյունքում են տեղի ունեցել:

Այսինքն՝ ընթացիկ հաշվի հաշվեկշիռը հավասար է առևտրային հաշվեկշիռ, զուտ գործոնային եկամուտների և զուտ ընթացիկ տրանսֆերտների հանրագումարին: Իսկ ԱՄՆ-ի նոր տերմինաբանությունը ընթացիկ հաշվի հաշվեկշիռը հավասար է.

$$\begin{aligned} \text{Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ} &= \\ &= \text{Առևտրային հաշվեկշիռ} + \\ &+ \text{Առաջնային եկամտի հաշվեկշիռ} + \\ &+ \text{Երկրորդային եկամտի հաշվեկշիռ} \end{aligned}$$

Նկատենք, որ «համախառն ազգային տնօրինվող եկամուտը» հավասար է «համախառն ազգային ծախսի» և «ընթացիկ հաշվի հաշվեկշիռի» գումարին.

$$\text{ՀԱՏԵ} = \underbrace{\text{C} + \text{I} + \text{G}}_{\substack{\text{համախառն} \\ \text{ազգային ծախս}}} + \underbrace{\text{X} - \text{M}}_{\substack{\text{առևտրային} \\ \text{հաշվեկշիռ}}} + \underbrace{\text{Առաջն. եկամտի հաշվ.} + \text{Երկրորդ. եկամտի հաշվ.}}_{\text{Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ}}$$

Կապիտալ և ֆինանսական հաշիվ: Բացի ապրանքների, ծառայությունների և եկամուտների հոսքերից (որոնք արտացոլվում են վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվում), երկրի և մնացյալ աշխարհի միջև տեղի են ունենում նաև գործարքներ՝ կապված ֆինանսական և կապիտալ ակտիվների հետ: Այդպիսի ակտիվներ են օրինակ՝ արժեթուղիք, պարտատոմսը, անշարժ գույքը:

Հիշենք, որ ՀԱՏԵ-ն արտահայտում է տնօրինվող եկամտի մեծությունը: Սակայն տնօրինվող եկամտի մեծությունը տարբեր է սպառման նպատակով առկա ռեսուրսների մեծությունից:

Այսպես՝ երբ օտարերկրացիները ձեռք են բերում ակտիվներ Հայաստանում (օրինակ՝ ռուսական Գազպրոմը 20 մլն դոլ-ով գնում է հայ-իրանական գազամուղը), ապա ակտիվների արտահանման արդյունքում Հայաստանի կողմից սպառման նպատակով տնօրինվող ռեսուրսների ծավալն աճում է (տվյալ դեպքում՝ 20 մլն դոլ-ով):

Նմանապես, երբ Հայաստանի ռեզիդենտները ձեռք են բերում արտերկրյա ակտիվներ (օրինակ՝ Հայաստանի պաշտոնյան 100 մլն դոլ-ով Դուբայում հիվանդանոց է կառուցում), ապա ակտիվների ներմուծման հետևանքով Հայաստանի կողմից սպառման նպատակով տնօրինվող ռեսուրսների ծավալը կրճատվում է (տվյալ դեպքում՝ 100 մլն դոլ-ով):

Ակտիվների առ ու վաճառքն արտացոլվում է վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում, որի հաշվեկշիռը հավասար է ֆինանսական ակտիվների արտահանման և ներմուծման տարբերությանը.

$$\begin{aligned} \text{Ֆինանսական հաշվի հաշվեկշիռ} &= \\ &= \text{Ֆինանսական ակտիվների արտահանում} - \\ &- \text{Ֆինանսական ակտիվների ներմուծում} \end{aligned}$$

Շեշտենք՝ քանի դեռ նշյալ պաշտոնյան մշտապես չի լքել հայրենիքը, այդ ներդրումից ստացված եկամուտները պետք է արձանագրվեն Հայաստանի համախառն ազգային եկամտում՝ անկախ նրանից՝ այդ գումարները կհանգրվանեն Կիպրոսում, թե հայրենիքում:

Այսպիսով՝ ակտիվների առ ու վաճառքը փոխում են սպառման նպատակով տնօրինվող ռեսուրսների ծավալը: Սակայն բացի ակտիվներ գնելուց ու վաճառելուց, երկիրը ակտիվներ ստանում և փոխանցում է իբրև նվիրատվություն: Վերջինն արտացոլվում է վճարային հաշվեկշռի կապիտալ հաշվում:

Կապիտալ հաշվի հաշվեկշիռը հավասար է կապիտալ ակտիվների ստացման և փոխանցման տարբերությանը.

$$\begin{aligned} \text{Կապիտալ հաշվի հաշվեկշիռ} &= \\ &= \text{Կապիտալ ակտիվների ստացում} - \\ &- \text{Կապիտալ ակտիվների փոխանցում} \end{aligned}$$

Բնականաբար, երբ կապիտալ հաշվի հաշվեկշիռը դրական է, ապա սպառման նպատակով տնօրինվող ռեսուրսներն աճում են:

Ստացանք, որ երկրի՝ սպառման նպատակով տնօրինվող ռեսուրսները հավասար են.

$$\begin{aligned} \text{Սպառման նպատակով տնօրինվող ռեսուրսներ} &= \\ &= \text{Համախառն ազգային տնօրինվող եկամուտ} + \\ &+ \text{Ֆինանսական հաշվի հաշվեկշիռ} + \\ &+ \text{Կապիտալ հաշվի հաշվեկշիռ} \end{aligned}$$

Հիշենք՝ սկսեցինք «համախառն ազգային ծախսից»: Դրան հավելեցինք առևտրային հաշվեկշիռը՝ «համախառն ներքին արդյունքը» ստանալու համար: Այնուհետև հավելեցինք զուտ գործոնային եկամուտը՝ «համախառն ազգային եկամուտը» ստանալու համար: Որից հետո հավելեցինք զուտ ընթացիկ տրանսֆերտները՝ «համախառն ազգային տնօրինվող եկամուտը» ստանալու համար:

ի վերջո՝ հավելեցինք կապիտալ ու ֆինանսական հաշիվների հաշվեկշիռները, ու դարձյալ վերադարձանք «համախառն ազգային ծախսին»:

Այսինքն, երբ սկսում ենք «համախառն ազգային ծախսից» և հավելում ենք վնասարկին հաշվեկշիռի բոլոր հաշիվները, ապա դարձյալ վերադառնում ենք «համախառն ազգային ծախսին»: Իսկ դա նշանակում է, որ երկրի և մնացյալ աշխարհի միջև տեղի ունեցող բոլոր գործարքների հանրագումարը զրո է: Վճարային հաշվեկշիռը միշտ հավասարակշռված է:

Բաց տնտեսության մակրոտնտեսական նույնությունները

Մակրոտնտեսական հավասարակշռությունը բխում է ամբողջական առաջարկի և պահանջարկի հավասարությունից: Վերջինից էլ հետևում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նույնությունը.

$$\underbrace{Y + M}_{\text{ամբողջական առաջարկ}} = \underbrace{C + I + G + X}_{\text{ամբողջական պահանջարկ}}$$

$$Y \equiv \text{ՀՆԱ} = C + I + G + X - M$$

որտեղ Y թողարկումն է, C ՝ մասնավոր սպառումը, I ՝ համախառն ներդրումները, G ՝ հանրային սպառումը, X ՝ ապրանքների ու ծառայությունների արտահանումը, M ՝ ապրանքների ու ծառայությունների ներմուծումը:

Ազգային հաշիվների համակարգը բացի ՀՆԱ-ից ներառում է եկամտի ևս երկու ցուցանիշներ՝ համախառն ազգային եկամուտը և համախառն ազգային տնօրինվող եկամուտը:

Համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ) հավասար է ՀՆԱ-ի և առաջնային եկամտի հաշվեկշռի (ԱԵՀ) գումարին.

$$\text{ՀԱԵ} = \text{ՀՆԱ} + \text{ԱԵՀ}$$

որտեղ ԱԵՀ հավասար է արտասահմանից ստացված և արտասահմանին վճարված առաջնային եկամուտների տարբերությանը:

Համախառն ազգային եկամուտը միայն եկամտի ցուցանիշ է՝ ի տարբերություն ՀՆԱ-ի, որը և՛ եկամտի, և՛ արտադրության ցուցանիշ է:

Եթե համախառն ազգային եկամտին գումարենք երկրորդային եկամտի հաշվեկշիռը (զուտ ընթացիկ տրանսֆերտները) (ԵԵՀ), ապա կստանանք համախառն ազգային տնօրինվող եկամուտը (ՀԱՏԵ).

$$\text{ՀԱՏԵ} = \text{ՀԱԵ} + \text{ԵԵՀ}$$

Այսինքն՝

$$\text{ՀԱՏԵ} = \underbrace{C + I + G + (X - M)}_{\text{համախառն ներքին արդյունք}} + \text{ԱԵՀ} + \text{ԵԵՀ}$$

Խնայողությունները սահմանվում են իբրև եկամտի ու սպառման տարբերություն: Հետևաբար, եթե համախառն եկամտից հանենք սպառումը՝ մասնավոր և հանրային, ապա կստանանք համախառն խնայողությունը (S).

$$\text{ՀԱՏԵ} - (C + G) = S$$

Քանի որ ընթացիկ հաշվի հաշվեկշիռը (ԸՀՀ) հավասար է առևտրային հաշվեկշռի և առաջնային ու երկրորդային եկամուտների հաշվեկշիռների գումարին՝

$$\text{ԸՀՀ} = X - M + \text{ԱԵՀ} + \text{ԵԵՀ}$$

Ինչպես նաև, քանի որ

$$\text{ՀԱՏԵ} = \underbrace{C + I + G}_{\text{ներքին կլանում}} + \underbrace{(X - M) + \text{ԱԵՀ} + \text{ԵԵՀ}}_{\text{ընթացիկ հաշվի հաշվեկշիռ}}$$

ապա

$$\underbrace{\text{ՀԱՏԵ}}_{\text{համախառն ազգային տնօրինվող եկամուտ}} - \underbrace{(C + I + G)}_{\text{ներքին կլանում}} = \underbrace{\text{ԸՀՀ}}_{\text{ընթացիկ հաշվի հաշվեկշիռ}}$$

Այսինքն՝ ընթացիկ հաշվի հաշվեկշիռը բացասական է, երբ երկրի կլանումը գերազանցում է տնօրինվող եկամտին. $\text{ԸՀՀ} < 0$, երբ $(C + I + G) > \text{ՀԱՏԵ}$: Հետևաբար՝ ընթացիկ հաշվի պակասորդի կրճատման համար անհրաժեշտ է կա՛մ տնօրինվող եկամուտն աճի, կա՛մ կլանումը կրճատվի:

Ընթացիկ հաշվի հաշվեկշիռը կարելի է մեկնաբանել նաև իբրև խնայողությունների և ներդրումների տարբերություն: Ունենք.

$$\text{ՀԱՏԵ} - C - I - G = \text{ԸՀՀ}$$

$$\Rightarrow \text{ՀԱՏԵ} - C - G = I + \text{ԸՀՀ}$$

Իսկ քանի որ $\text{ՀԱՏԵ} - C - G = S$, ապա

$$S = I + \text{ԸՀՀ} \quad \Rightarrow \quad \text{ԸՀՀ} = S - I$$

Այսինքն՝ ընթացիկ հաշվի հաշվեկշիռը բացասական է՝ $\text{ԸՀՀ} < 0$, երբ ներդրումները գերազանցում են խնայողություններին՝ $I > S$: Հետևաբար՝ ընթացիկ հաշվի բացասական հաշվեկշռի կրճատման համար անհրաժեշտ է կա՛մ խնայողությունների ընդլայնում, կա՛մ ներդրումների կրճատում: Սակայն այդ երկու քաղաքականությունների ազդեցությունը տրամագծորեն հակառակ է: Ներդրումների կրճատումը կհանգեցնի ապագա եկամտի կրճատման, իսկ խնայողությունների ընդլայնումը եկամտի աճի հնարավորություն կստեղծի:

Նկատենք, որ բաց տնտեսությունում ներդրումները խնայողություններին կարող են գերազանցել միայն կապիտալի ներհոսքի դեպքում: Ուստի՝ երբ ընթացիկ հաշվի հաշվեկշիռը բացասական է, ապա կապիտալ ու ֆինանսական հաշվի հաշվեկշիռը անհրաժեշտաբար դրական է:

Ընթացիկ հաշվի հաշվեկշռի առնչությունը ներդրումներին և խնայողություններին առավել պարզորոշ դրսևորվում է, երբ խնայողություններն ու ներդրումները տարանջատում ենք ըստ մասնավոր և հանրային հատվածների:

Այսպես՝ համախառն ներդրումները հավասար են մասնավոր՝ I_d , և հանրային՝ I_g , ներդրումների գումարին ($I = I_d + I_g$):

Իսկ հանրային համախառն ծախսերը՝ $G_{համ.}$ (պետական բյուջեի ընթացիկ և կապիտալ ծախսերը) հավասար են հանրային սպառման՝ G , և հանրային ներդրումների՝ I_g , գումարին. $G_{համ.} = G + I_g$:

Հետևաբար՝ համախառն ազգային տնօրինվող եկամուտը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

$$\text{ՀԱՏԵ} = C + \overbrace{I_d + I_g}^{\text{համախառն ներդրումներ}} + G + (X - M) + \text{ԱԵՀ} + \text{ԵԵՀ}$$

$$\text{ՀԱՏԵ} = C + I_d + G_{համ.} + [X - M + \text{ԱԵՀ} + \text{ԵԵՀ}]$$

ընթացիկ հաշվի հաշվեկշիռ

Վերջին հավասարման երկու կողմից հանենք «զուտ հարկերը»՝ T .

$$\text{ՀԱՏԵ} - T = C + I_d + G_{համ.} + \text{ԸՀՀ} - T$$

«Զուտ հարկերը» հավասար են մասնավոր հատվածի վճարած հարկերի և ստացած լրավճարների տարբերությանը: Ուստի՝ «համախառն ազգային տնօրինվող եկամուտի» և «զուտ հարկերի» տարբերությունը հավասար է «համախառն մասնավոր տնօրինվող եկամտին».

$$\text{Համախառն մասնավոր տնօրինվող եկամուտը} = \text{ՀԱՏԵ} - T$$

$$\text{Համախառն մասնավոր տնօրինվող եկամուտը} = C + I_d + G_{համ.} + \text{ԸՀՀ} - T$$

Ի վերջո՝ մասնավոր խնայողությունները՝ S_d , հավասար են համախառն մասնավոր տնօրինվող եկամտի և մասնավոր սպառման տարբերությանը: Այսինքն՝

$$S_d = \text{ՀԱՏԵ} - T - C$$

$$S_d = \text{Համախառն մասնավոր տնօրինվող եկամուտ} - C$$

Հետևաբար՝ ընթացիկ հաշվի հաշվեկշիռը կարող ենք ներկայացնել իբրև երկու պակասորդների՝ մասնավոր և հանրային, հանրագումար.

$$S_d = I_d + G_{համ.} + \text{ԸՀՀ} - T$$

$$\text{ԸՀՀ} = (S_d - I_d) + (T - G_{համ.})$$

Մասնավոր հատվածի պակասորդը տեղի ունի, երբ մասնավոր խնայողությունները պակաս են մասնավոր ներդրումներից: Իսկ հանրային հատվածի (պետական բյուջեի) պակասորդը տեղի ունի, երբ հարկային եկամուտները պակաս են կառավարության համախառն ծախսերից:

Վճարային հաշվեկշռի կառուցվածքը

Վճարային հաշվեկշիռը երկրի ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև որոշ ժամանակաշրջանի (սովորաբար մեկ տարվա) ընթացքում կատարված բոլոր տնտեսական գործարքների ամփոփ վիճակագրական ներկայացումն է: Այն արտացոլում է բոլոր արտաքին տնտեսական գործարքները, որոնք կապված են ապրանքների, ծառայությունների և ակտիվների հետ, օրինակ՝ ապրանքների առևտուրը, օտարերկրյա ներդրումները, միջազգային վարկերը և այլն:

Ռեզիդենտ

Տնտեսական միավորը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ գտնվում է իր տնտեսական շահերի կենտրոնը:

Ֆիզիկական անձը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է: Երկրից ժամանակավորապես (նվազ քան մեկ տարով) բացակայողը համարվում է ծագման երկրի ռեզիդենտ, օրինակ՝ զբոսաշրջիկը կամ սեզոնային աշխատողը: Արտասահմանում ավելի քան մեկ տարի գտնվելու դեպքում ֆիզիկական անձը համարվում է հյուրընկալ երկրի ռեզիդենտ՝ բացի ուսման կամ բուժման մեկնածներից, որոնք շարունակում են համարվել ծագման երկրի ռեզիդենտներ¹:

Այսպես՝ գյումրեցի երիտասարդը, որն ամռանը արտագնա աշխատանքի է մեկնել, շարունակում է հանդիսանալ Հայաստանի ռեզիդենտ: Արտերկրում նրա ստացած վարձատրույթունը պետք է գրանցվի Հայաստանի վճարային հաշվեկշռում՝ իբրև առաջնային եկամտի ներհոսք:

Երևանից մեկ այլ երիտասարդ, որն ավելի քանի մեկ տարի աշխատում է իր պատկերացրած ավետյաց երկրում՝ ԱՄՆ-ում, այլևս Հայաստանի ռեզիդենտ չէ: Նրա եկամուտներն այլևս Հայաստանի ռեզիդենտի առաջնային եկամուտ չեն և ՀՀ վճարային հաշվեկշռում չեն գրանցվի: Բայց եթե հայրենիքում գտնվող իր ծնողներին նա 50 դոլ. ուղարկի, ապա դա ՀՀ վճարային հաշվեկշռում կգրանցվի իբրև երկրորդային եկամուտների ներհոսք:

Իրավաբանական անձը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որտեղ իրականացնում է արտադրություն և կամ տնօրինում է հող, շինություններ: Բազմազգային ընկերության մասնաճյուղը համարվում է հյուրընկալ երկրի ռեզիդենտ:

Այսպես՝ Երևանի կոնյակի գործարանը (ԵԿԳ), թեպետ պատկանում է ֆրանսիական Պեռնո Ռիկարին, բայց Հայաստանի ռեզիդենտ է: Արդյունքում, երբ ԵԿԳ-ն Հայաստանի գյուղացիական տնտեսություններից խաղող է մթերում, ապա դա Հայաստանի ռեզիդենտների միջև տեղի ունեցող գործարք է, որը ՀՀ վճարային հաշվեկշռում չի գրանցվում: Բայց երբ ԵԿԳ-ն կոնյակի տակառներ է ձեռք բերում Պեռնո Ռիկարի մայր ձեռնարկությունից (կամ որևէ այլ ՀՀ ոչ ռեզիդենտից), ապա դա գրանցվում է ՀՀ վճարային հաշվեկշռում (տվյալ դեպքում՝ իբրև տակառների ներմուծում):

Կրկնակի գրանցում

Վճարային հաշվեկշիռ անվանումն ինքնին ենթադրում է, որ այն միշտ հաշվեկշռված է: Դա արդյունք է նրա, որ վճարային հաշվեկշռում բոլոր գործարքները գրանցվում են կրկնակի գրանցման հաշվապահական սկզբունքով:

¹ Արտասահմանում գնվողական կամ դիվանագիտական ծառայություն իրականացնող անձը, նույնպես, համարվում է ծագման երկրի ռեզիդենտ՝ անկախ այլ երկրում գտնվելու տևողությունից:

Այսպես՝ տնտեսական գործարքը, սովորաբար, ենթադրում է հավասար արժեքների փոխանակում: Օրինակ՝ երբ Չինաստանից Հայաստան ապրանքներ են մատակարարվում, ապա դրա դիմաց կատարվում է համապատասխան վճարում: Ապրանքների մատակարարումը գործարքի մի կողմն է, իսկ դրա դիմաց վճարումը՝ մյուս կողմը:

Վճարային հաշվեկշռում բոլոր գործարքները գրանցվում են երկու իրար հավասար գրանցումներով: Նշված օրինակում՝ Չինաստանից Հայաստան ապրանքների մատակարարումը ՀՀ վճարային հաշվեկշռում գրանցվում է ընթացիկ հաշվի «ապրանքների ներմուծում» հոդվածում, իսկ դրա դիմաց վճարումը՝ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում:

Վճարային հաշվեկշռում գործարքները գրանցվում են կրեդիտ-դեբետ ստանդարտ հաշվապահական սկզբունքով: Այսպես՝ կրեդիտում գրանցվում են ապրանքների ու ծառայությունների արտահանումը, եկամուտների ստացումը, ակտիվների կրճատումը և պարտավորությունների ավելացումը: Իսկ դեբետում՝ ապրանքների ու ծառայությունների ներմուծումը, եկամուտների վճարումը, ակտիվների ավելացումը և պարտավորությունների կրճատումը (աղ. 14-1):

Աղյուսակ 14-1: Գործարքների գրանցումը վճարային հաշվեկշռում

Կրեդիտ	Դեբետ
Ապրանքների ու ծառայությունների արտահանում	Ապրանքների ու ծառայությունների ներմուծում
Եկամուտների ստացում	Եկամուտների վճարում
Տրանսֆերտների ստացում	Տրանսֆերտների փոխանցում
Ֆինանսական պարտավորությունների ավելացում	Ֆինանսական պարտավորությունների կրճատում
Ֆինանսական ակտիվների կրճատում	Ֆինանսական ակտիվների ավելացում

Կրկնակի գրանցումը դիտարկենք երեք տիպային գործարքների օրինակով:

ա) Ապրանքի արտահանում: Դիցուք արտահանվել է ապրանք՝ \$100 արժեքով, որի դիմաց ստացվել է համարժեք կանխիկ վճարում: Այդ գործարքը կգրանցվի հետևյալ կերպ.

	Կրեդիտ	Դեբետ	
Հնթացիկ հաշիվ / Ապրանքներ	\$100		
Ֆինանսական հաշիվ / Այլ ներդրումներ Արժույթ		\$100	(Ֆինանսական ակտիվի ավելացում)

Արժույթը ֆինանսական ակտիվ է, ուստի՝ դրա ավելացումը գրանցվում է դեբետում:

բ) Պորտֆելային ներդրում: Օտարերկրյա ռեզիդենտը \$90-ով գնել է Անկապբանկի բաժնետոմսը:

Բաժնետոմսը ֆինանսական ակտիվ է, հետևաբար, երբ այն փոխանցվում է ոչ ռեզիդենտին, ապա Հայաստանի ֆինանսական ակտիվները կրճատվում են, ինչը գրանցվում է կրեդիտում: Ֆինանսական ակտիվ է նաև արժույթը, որը վճարվում է բաժնետոմսի դիմաց, և որի ավելացումը գրանցվում է դեբետում:

	Կրեդիտ	Դեբետ	
Ֆինանսական հաշիվ / Պորտֆելային ներդրումներ Բաժնետոմսեր	\$90		(Ֆինանսական ակտիվի կրճատում)
Ֆինանսական հաշիվ / Այլ ներդրումներ Արժույթ		\$90	(Ֆինանսական ակտիվի ավելացում)

Առաջին օրինակում իրական ակտիվը՝ ապրանքը, փոխանակվում է ֆինանսական ակտիվի հետ: Բաժնետոմսի օրինակում միմյանց հետ փոխանակվում են երկու ֆինանսական ակտիվներ: Իսկ հաջորդ օրինակում կդիտարկենք այն դեպքը, երբ ֆինանսական ակտիվը փոխանակվում է ֆինանսական պարտավորության հետ:

գ) Օտարերկրյա վարկ: «Սին նպատակներ» հայկական ընկերությունը ղրղզական «ABC» բանկից ստանում է \$80-ի վարկ: Արդյունքում՝ ստեղծվել է ֆինանսական պարտավորություն, որի դիմաց վարկառուն ստացել է \$80-ի արժույթ:

	Կրեդիտ	Դեբետ	
Ֆինանսական հաշիվ / Այլ ներգրումներ Վարկեր	\$80		(ֆինանսական պարտավորության ավելացում)
Ֆինանսական հաշիվ / Այլ ներգրումներ Արժույթ		\$80	(ֆինանսական ակտիվի ավելացում)

Քանի որ բոլոր գործարքները գրանցվում են կրկնակի գրանցման սկզբունքով, ապա վճարային հաշվեկշռի կրեդիտների գումարը հավասար է դեբետների գումարին: Արդյունքում՝ վճարային հաշվեկշռը միշտ հավասարակշռված է: Այսինքն՝ երկրի և մնացյալ աշխարհի միջև տեղի ունեցող բոլոր գործարքների հանրագումարը զրո է:

Տրանսֆերտներ

Նշեցինք, որ տնտեսական գործարքները ենթադրում են հավասար արժեքների փոխանակում: Սակայն երբեմն տնտեսական արժեքները տրամադրվում են անհատույց, օրինակ՝ մարդասիրական օգնությունը, սփյուռքից օգնությունը, ներգրումային շնորհները: Նման գործարքները գրանցվում են վճարային հաշվեկշռի ընթացիկ կամ կապիտալ տրանսֆերտներ հոդվածներում՝ կախված տրանսֆերտի բնույթից:

Այսպես, երբ Հայաստանը Կատրինայի ջրհեղեղից հետո 200 հզ դոլ-ի մարդասիրական օգնություն (վրաններ, քնապարկեր) տրամադրեց ԱՄՆ-ին, դա ՀՀ վճարային հաշվեկշռում գրանցվեց իբրև ապրանքների արտահանում (կրեդիտ), որի դիմաց «վճարվել է» տրանսֆերտով (դեբետ):

Աղյուսակ 14-2: ԱՄՆ-ին Հայաստանի տրամադրած մարդասիրական օգնության գրանցումը Հայաստանի և ԱՄՆ-ի վճարային հաշվեկշռներում (հազար դոլար)

Հայաստան		ԱՄՆ	
Արտահանում - կրեդիտ	+ 200	Ներմուծում - դեբետ	- 200
Տրանսֆերտներ - դեբետ	- 200	Տրանսֆերտներ - կրեդիտ	+ 200

Հոսք և պաշար

Վճարային հաշվեկշռում գրանցվում են միայն հոսքերը: Բոլոր տնտեսական գործարքները, օրինակ՝ ուղղակի ներգրումները, հոսքեր են: Սակայն յուրաքանչյուր հոսքի արդյունքում փոխվում է համապատասխան պաշարը:

Այսպես՝ Հայաստանում 2016թ-ին արտերկրից ուղղակի ներգրումների ներ հոսքը կազմել է \$338մլն, որի արդյունքում 2016թ-ի դեկտեմբերի վերջին արտերկրից ուղղակի ներգրումների պաշարը կազմել է \$4,633մլն:

Պաշարները ցույց են տալիս ժամանակի որոշակի պահին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մակարդակը: Դրանք գրանցվում են երկրի «միջազգային ներգրումային դիրքում»:

Միջազգային ներգրումային դիրքը վիճակագրական հաշվետվություն է, որը ցույց է տալիս ժամանակի որոշակի պահին.

ա) երկրի ռեզիդենտների՝ ոչ-ռեզիդենտներին իբրև պահանջ ներկայացվող ֆինանսական ակտիվների և պահուստային ակտիվների արժեքն ու կառուցվածքը,

բ) երկրի ռեզիդենտների՝ ոչ-ռեզիդենտների նկատմամբ ստանձնած պարտավորությունների արժեքն ու կառուցվածքը:

Հիշենք, որ վճարային հաշվեկշռում գրանցվում են միայն ռեզիդենտների և ոչ-ռեզիդենտների միջև տեղի ունեցող գործարքները: Հետևաբար գործարքը, որը վերաբերում է արտաքին ակտիվին, բայց տեղի է ունենում երկու ռեզիդենտների միջև, վճարային հաշվեկշռում չի գրանցվում: Սակայն այդ գործարքն ազդում է այդ երկու ռեզիդենտների արտաքին ակտիվների դիրքի (պաշարի) վրա: Եվ եթե այդ երկու ռեզիդենտները տարբեր ինստիտուցիոնալ ոլորտներից են², ապա այդ գործարքը կազդի միջազգային ներգրումային դիրքի ոլորտային կառուցվածքի վրա:

Վճարային հաշվեկշռի հաշիվները

Վճարային հաշվեկշիռը ներառում է երեք հիմնական հաշիվներ՝ ընթացիկ հաշիվ, կապիտալի հաշիվ, ֆինանսական հաշիվ:

Ընթացիկ հաշիվն առնչվում է տվյալ ժամանակաշրջանի հոսքերին: Այնինչ կապիտալի և ֆինանսական հաշիվներն առնչվում են մնացյալ աշխարհի նկատմամբ ակտիվների ու պարտավորությունների կուտակմանը:

Վճարային հաշվեկշռի ամփոփ տեսքը ներկայացված է աղ. 14-3-ում:

Աղյուսակ 14-3: Վճարային հաշվեկշռի կառուցվածքը

Ընթացիկ հաշիվ	Կրեդիտ	Դեբետ
- Ապրանքներ	արտահանում	ներմուծում
- Ծառայություններ	արտահանում	ներմուծում
- Առաջնային եկամուտներ	ստացում	վճարում
- Երկրորդային եկամուտներ	ստացում	փոխանցում
Կապիտալի հաշիվ	Կրեդիտ	Դեբետ
- Զարտադրված ոչ ֆինանսական ակտիվներ	ստացում	փոխանցում
- Կապիտալ տրանսֆերտներ	ստացում	փոխանցում
Ֆինանսական հաշիվ	Զուտ պարտավորությունների ստանձնում	Զուտ ակտիվների ձեռք բերում
- Ուղղակի ներդրումներ	Հայրեն. ակտիվ. գուտ վաճառք*	Օտար. ակտիվ. գուտ առք**
- Պորտֆելային ներդրումներ	Հայրեն. ակտիվ. գուտ վաճառք	Օտար. ակտիվ. գուտ առք
- Ֆինանսական ածանցյալներ	Հայրեն. ակտիվ. գուտ վաճառք	Օտար. ակտիվ. գուտ առք
- Այլ ներդրումներ	Հայրեն. ակտիվ. գուտ վաճառք	Օտար. ակտիվ. գուտ առք
- Պահուստային ակտիվներ	Կիրառելի չէ	Օտար. ակտիվ. գուտ առք

* Հայրենական ակտիվների գուտ վաճառք: ** Օտարերկրյա ակտիվների գուտ առք:

² Ինստիտուցիոնալ ոլորտներն են տնային տնտեսությունները, ոչ ֆինանսական ձեռնարկությունները, առևտրային բանկերը, կառավարությունը, կենտրոնական բանկը և այլն:

- Ապրանքների զուտ արտահանում (ապրանքների արտահանում հանած ներմուծում)
- + ծառայությունների զուտ արտահանում (օր.՝ տրանսպորտ, ճանապարհորդություն)
- + զուտ առաջնային եկամուտներ (աշխատողների վարձատրություն, ներդրումներից եկամուտներ)
- + զուտ երկրորդային եկամուտներ (մարդասիրական օգնություն, սփյուռքից օգնություն)
- = **ընթացիկ հաշվի հաշվեկշիռ**
- + կապիտալի հաշվի հաշվեկշիռ
- + զուտ ուղղակի ներդրումներ (օր.՝ արտերկրյա ընկերության 15% բաժնեմասի գնում)
- + զուտ պորտֆելային ներդրումներ (օր.՝ արտերկրյա ընկերության 5% բաժնեմասի գնում)
- + ֆինանսական ածանցյալներ
- + այլ ներդրումներ (արժույթ, ավանդներ, վարկեր)
- + պահուստային ակտիվների փոփոխություն
- = **ընդհանուր հաշվեկշիռ**
- + զուտ սխալներ և բացթողումներ
- = **զրո**

Ո՞րն է զուտ սխալներ և բացթողումներ հոդվածի իմաստը: Վճարային հաշվեկշիռը, քանի որ կազմվում է կրկնակի հաշվառման սկզբունքով, տեսականում պետք է հավասարակշռվի: Այսինքն՝ հանրագումարը պետք է լինի զրո:

Գործնականում, սակայն, քանի որ տեղեկատվության աղբյուրները կատարյալ չեն, ապա մշտապես առաջանում է որոշակի շեղում: Ուստի «զուտ սխալներ և բացթողումներ» հոդվածը հանդես է գալիս իբրև հավասարակշռող հոդված:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

Ապրանքներ

Ապրանքներ հոդվածում գրանցվում են ապրանքների արտահանումը և ներմուծումը: Արտահանումը գրանցվում է կրեդիտում, ներմուծումը՝ դեբետում: Ե՛լ արտահանվող, և՛ ներմուծվող ապրանքները գրանցվում են այն արժեքով, որն ապրանքներն ունեն առաջին արտահանող երկրի մաքսային սահմանը հատելու պահին (Ինկոթերմսի FOB կամ FAS կամ FCA պայմաններ): Օրինակ՝ Կորեայից Հայաստան ներմուծվող ավտոմեքենաները Հայաստանի վճարային հաշվեկշռի ապրանքներ հոդվածի դեբետում գրանցվում են Կորեայի մաքսային սահմանին ունեցած արժեքով, այսինքն՝ առանց Կորեայից Հայաստան փոխադրման տրանսպորտային, ապահովագրական և այլ ծախսերի (վերջինները գրանցվում են ծառայություններ հոդվածում):

Ծառայություններ

Ծառայություններ հոդվածում գրանցվում են տրանսպորտի, ճանապարհորդության, շինարարության, կապի, ապահովագրության և այլ ծառայությունների մատուցման հետ կապված գործարքները:

Տրանսպորտ: Տրանսպորտային ծառայությունները ներառում են բոլոր տիպի (ցամաքային, ծովային, օդային) տրանսպորտային միջոցներով ուղևորների կամ բեռների փոխադրման համար մի երկրի ռեզիդենտի կողմից մեկ այլ երկրի ռեզիդենտին մատուցվող ծառայությունները:

Ուղևորների դեպքում ծառայության արտահանում (կրեդիտ) տեղի է ունենում, երբ ռեզիդենտ փոխադրողը տրանսպորտային ծառայություն է մատուցում ոչ-ռեզիդենտին: Իսկ ծառայության ներմուծում (դեբետ) տեղի է ունենում, երբ ոչ-ռեզիդենտ փոխադրողը տրանսպորտային ծառայություն է մատուցում ռեզիդենտին: Օրինակ, երբ «Տարոն ավիան» փոխադրում է Վրաստանի ռեզիդենտներին, ապա դա տրանսպորտային ծառայությունների արտահանում է, իսկ երբ «Ավստրիական ավիաուղիները» փոխադրում է Հայաստանի ռեզիդենտներին, ապա դա տրանսպորտային ծառայությունների ներմուծում է:

Բեռների դեպքում համարվում է, որ տրանսպորտային տեղափոխման ծախսը կատարում է ներմուծող երկրի ռեզիդենտը: Հետևաբար՝ տրանսպորտային ծառայության արտահանում (կրեդիտ) տեղի է ունենում, երբ բեռները արտահանվող ապրանքներ են, և փոխադրումն իրականացնում է ռեզիդենտ փոխադրողը: Օրինակ, երբ Սպայկա ընկերությունը Հայաստանից Ռուսաստան է տեղափոխում ծիրան, ապա դա Հայաստանի համար տրանսպորտային ծառայությունների արտահանում է:

Նկատենք, երբ արտահանվող բեռների փոխադրումն իրականացնում է այդ բեռները ներմուծող երկրի փոխադրողը, ապա դա ո՛չ արտահանող, ո՛չ ներմուծող երկրի վճարային հաշվեկշռում, իբրև տրանսպորտային ծառայություն, չի գրանցվում:

Իսկ տրանսպորտային ծառայության ներմուծում (դեբետ) տեղի է ունենում, երբ բեռները ներմուծվող ապրանքներ են, և փոխադրումն իրականացնում է ոչ-ռեզիդենտ փոխադրողը: Օրինակ, երբ ուկրաինական բեռները Հայաստան են տեղափոխվում վրացական տրանսպորտային ընկերության միջոցով, ապա դա Հայաստանի համար տրանսպորտային ծառայությունների ներմուծում է (տվյալ դեպքում՝ Վրաստանից):

Կրեդիտում է գրանցվում նաև ռեզիդենտ փոխադրողի կողմից երկու այլ երկրների միջև բեռների փոխադրումը:

Ճանապարհորդություն: Ճանապարհորդային ծառայությունների արտահանումը (կրեդիտ) ներառում է տվյալ երկիր այցի ընթացքում այլ երկրի ռեզիդենտի ձեռք բերած ապրանքների ու ծառայությունների արժեքը: Իսկ ներմուծումը (դեբետ) ներառում է տվյալ երկրի ռեզիդենտի՝ այլ երկիր այցի ընթացքում ձեռք բերած ապրանքների ու ծառայությունների արժեքը: Միակ էական բացառությունը, որը չի ներառվում ճանապարհորդություն հոդվածում, միջազգային տրանսպորտային տեղափոխման ծառայությունն է (այն գրանցվում է տրանսպորտ հոդվածում):

Այսպես, երբ հայ զբոսաշրջիկը օդանավով մեկնում է Վերոնա, ապա Վերոնայում նրա ձեռք բերած բոլոր ապրանքների ու ծառայությունների, այդ թվում՝ սննդի, հյուրանոցի, հուշանվերների և տեղական տրանսպորտի արժեքը գրանցվում է ճանապարհորդային ծառայություններ հոդվածի դեբետում (ներմուծում): Շեշտենք, որ Երևան-Վերոնա օդային տրանսպորտի արժեքը գրանցվում է տրանսպորտային ծառայություններ հոդվածում, եթե իհարկե տրանսպորտային ընկերությունը հայկական չէ:

Եվ հակառակը, երբ վերոնացի զբոսաշրջիկն այցելում է Երևան, ապա նրա ձեռք բերած ապրանքների ու ծառայությունների արժեքը գրանցվում է ճանապարհորդային ծառայություններ հոդվածի կրեդիտում (արտահանում):

Ուսման և բուժման նպատակով այցելուների ծախսերը (ուսման վարձ, բուժման վճար և այլն) նույնպես գրանցվում են ճանապարհորդություն հոդվածում:

Շինարարական ծառայություններ: Ներառում է արտերկրում ռեզիդենտ ձեռնարկության (կրեդիտ) և տվյալ երկրում ոչ-ռեզիդենտ ձեռնարկության (դեբետ) կողմից շինարարական ծառայությունների մատուցումը:

Օրինակ՝ երբ հայկական շինարարական ընկերությունը մերձսովյան ավանում կարտոֆիլի պահեստ է կառուցում, ապա դա շինարարական ծառայությունների արտահանում է: Իսկ երբ շինական ընկերությունը Հայաստանում ավտոճանապարհ է կառուցում, ապա դա շինարարական ծառայությունների ներմուծում է:

Առաջնային եկամուտներ

Եկամուտներ հոդվածը դասակարգվում է աշխատողների վարձատրություն և ներդրումներից եկամուտներ ենթահոդվածների:

Աշխատողների վարձատրությունը ներառում է արտերկրում ռեզիդենտ աշխատողի ստացած աշխատավարձը (կրեդիտ) և մեր երկրում ոչ-ռեզիդենտ աշխատողին վճարված աշխատավարձը (դեբետ):

Օրինակ՝ Հայաստանից Ռուսաստան սեզոնային աշխատանքի մեկնած արտագնա աշխատողի աշխատավարձը գրանցվում է ՀՀ վճարային հաշվեկշռի «աշխատողների վարձատրություն» հոդվածի կրեդիտում (առաջնային եկամուտների ստացում):

Ներդրումներից եկամուտները ներառում են ռեզիդենտի կողմից արտաքին ֆինանսական ակտիվների տնօրինման դիմաց ստացված եկամուտները (կրեդիտ) և ոչ-ռեզիդենտի նկատմամբ ստանձնած պարտավորությունների դիմաց վճարված եկամուտները (դեբետ):

Ներդրումներից եկամուտները դասակարգվում են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումներից եկամուտների:

Ուղղակի ներդրման դեպքում մի երկրի ռեզիդենտը ձեռք է բերում երկարաժամկետ շահ մեկ այլ երկրի ռեզիդենտ ձեռնարկությունում: Երկարաժամկետ շահը ենթադրում է ուղղակի ներդրողի ու ուղղակի ներդրման ձեռնարկության միջև երկարատև հարաբերությունների առկայություն և ներդրողի կողմից ձեռնարկության կառավարման վրա նշանակալի ազդեցություն:

Ի տարբերություն ուղղակի ներդրման՝ պորտֆելային ներդրման դեպքում ներդրողը չի տիրապետում ձեռնարկության կառավարման վրա ներգործելու բավարար ազդեցության և հետաքրքրված է միայն իր կապիտալի ապահովվածությամբ, դրա արժեքի մեծացմամբ և հատուցի ստացմամբ:

Քանի որ հնարավոր չէ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պարզել՝ արդյո՞ք ներդրողը հետապնդում է երկարաժամկետ շահ, թե՛ ոչ, ապա ներդրումը համարվում է ուղղակի, եթե ներդրողը տնօրինում է ձեռնարկության առնվազն 10% բաժնեթղթերը (կամ դրա համարժեքը):

Ուղղակի և պորտֆելային ներդրումներից եկամուտները բաժանվում են կապիտալի մասնակցությունից եկամուտների (շահաբաժիններ) և պարտքի հանձնառությունից եկամուտների (տոկոսավճարներ):

Պորտֆելային ներդրումներից եկամուտները ձևավորվում են բաժնետոմսերի, պարտատոմսերի, դրամական շուկայի գործիքների, ֆինանսական ածանցյալների տնօրինումից:

Այլ ներդրումներից եկամուտները ներառում են վարկերի և ավանդների դիմաց վճարված և ստացված տոկոսները:

Երկրորդային եկամուտներ (ընթացիկ տրանսֆերտներ)

Ընթացիկ տրանսֆերտները ներառում են միջպետական շնորհները, մարդասիրական օգնությունը, սփյուռքից օգնությունը:

Շեշտենք՝ սփյուռքից օգնությունը ներառում է այն անձանց փոխանցումները, որոնք այլ երկրների ռեզիդենտ են: Հետևաբար՝ արտերկիր մեկնած ռեզիդենտի փոխանցումը համարվում է առաջնային եկամուտ, և միայն մեկ տարի անց, երբ այդ անձը դադարում է լինել ծագման երկրի ռեզիդենտ, այդ փոխանցումները համարվում են տրանսֆերտներ:

ԿԱՊԻՏԱԼԻ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Կապիտալի հաշիվ

Կապիտալի հաշիվն արտացոլում է (ա) շարտագրված ոչ ֆինանսական ակտիվների և (բ) կապիտալ տրանսֆերտների հետ կապված գործարքները:

Չարտագրված ոչ ֆինանսական ակտիվներն են բնական ռեսուրսները, պայմանագրերը (օրինակ՝ գործունեության որոշ տեսակներ ծավալելու թույլտվությունը), մարքեթինգային ակտիվները (օրինակ՝ բարի անունը):

Ինչ վերաբերում է կապիտալ տրանսֆերտին, ապա «տրանսֆերտ» տերմինը հուշում է, որ առկա է ակտիվի անհատույց փոխանցում: Ի տարբերություն ընթացիկի՝ կապիտալ տրանսֆերտի դեպքում տրանսֆերտ ստացողի կապիտալ միջոցներն ավելանում են:

Կապիտալ տրանսֆերտները ներառում են (ա) ֆիքսված (կապիտալ) ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը, (բ) ֆիքսված ակտիվ ձեռք բերելու նպատակով ներդրումային շնորհի տրամադրումը, (գ) պարտքի ներումը:

Կապիտալ տրանսֆերտները սովորաբար կապված են պետական մարմինների հետ, քանի որ մասնավոր անձինք հազվադեպ են այլ մասնավոր անձանց անհատույց կապիտալ ակտիվներ նվիրում և կամ պարտք ներում:

Ռուսաստանը 2005թ-ին, երբ իր զորքերը հանեց Վրաստանից, ռազմական հենակալանների շինությունները նվիրեց Վրաստանին: Դա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում էր (Ռուսաստանն այդ շինությունները նվիրեց, որովհետև դրանք հնարավոր չէր տեղափոխել և բացի այդ՝ անպետք վիճակում էին):

Ներդրումային շնորհի օրինակ էր Հայաստանի կառավարությանը Քրքորյանի Լինսի հիմնադրամի կողմից ճանապարհաշինության և դպրոցաշինության նպատակով միջոցների տրամադրումը: Շեշտենք, երբ շնորհը տրամադրվում է ընթացիկ սպառման նպատակով (օրինակ՝ անդամթերք ձեռք բերելու համար), այն գրանցվում է «ընթացիկ տրանսֆերտներում»: Իսկ կապիտալի հաշվում գրանցվում են միայն այն շնորհները, որոնք պետք է օգտագործվեն ֆիքսված ակտիվներ ձեռք բերելու համար:

Ֆինանսական հաշիվ

Ֆինանսական հաշվում գրանցվում են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ կապված գործարքները: Այդ գործարքները կարող են կապված լինել ապրանքների, ծառայությունների, եկամուտների, կապիտալ ակտիվների կամ ֆինանսական ակտիվների հետ: Օրինակ՝ ապրանքների արտահանմանը սովորաբար համապատասխանում է ֆինանսական ակտիվի՝ կանխիկի կամ առևտրային վարկի ավելացում: Պարտատոմսի (որը ֆինանսական ակտիվ է) վաճառքին սովորաբար համապատասխանում է կանխիկի ավելացում:

Ֆինանսական հաշվի ընդհանուր հաշվեկշիռը կոչվում է «զուտ վարկավորում / զուտ պարտքի ստանձնում»: Զուտ վարկավորումը նշանակում է, որ երկիրը զուտ հաշվով միջոցներ է տրամադրում մնացյալ աշխարհին: Իսկ զուտ պարտքի ստանձնումը նշանակում է, որ երկիրը մնացյալ աշխարհից զուտ հաշվով պարտք է վերցնում: Բնականաբար, երկիրը կամ զուտ վարկավորում է, կամ էլ զուտ պարտք է ստանձնում:

Ֆինանսական հաշվի ընդհանուր հաշվեկշռի արժեքը պետք է հավասար լինի ընթացիկ և կապիտալի հաշիվների զուտ հաշվեկշռին: Եթե ընթացիկ և կապիտալի հաշիվների կրեդիտը գերազանցում է դեբետին, ապա ֆինանսական հաշվում պետք է լինի ֆինանսական ակտիվների զուտ ձեռք բերում կամ պարտավորությունների զուտ կրճատում: Իսկ հակառակ դեպքում, եթե կրեդիտը պակաս է դեբետից, ապա ֆինանսական հաշվում պետք է լինի ֆինանսական ակտիվների զուտ վաճառք կամ պարտավորությունների զուտ ավելացում:

Ֆինանսական հաշվում գործարքները գրանցվում են զուտ սկզբունքով: Այսինքն՝ ցույց է տրվում ակտիվների և պարտավորությունների միայն զուտ անճը կամ զուտ նվազումը:

Ի տարբերություն ֆինանսական հաշվի՝ ընթացիկ և կապիտալի հաշիվներում գործարքները գրանցվում են համախառն սկզբունքով: Օրինակ՝ «պորտֆելային ներդրումներից եկամուտներ» հոդվածի կրեդիտը և դեբետը գրանցվում են առանձին:

Ֆինանսական հաշվում գործարքները դասակարգվում են ըստ ներդրումների ֆունկցիոնալ տիպերի՝ (ա) ուղղակի ներդրումներ, (բ) պորտֆելային ներդրումներ, (գ) ֆինանսական ածանցյալներ, (դ) այլ ներդրումներ, (ե) պահուստային ակտիվներ:

■ Ուղղակի ներդրումներ

Ուղղակի ներդրման հարաբերության դեպքում մի երկրի ռեզիդենտը (ուղղակի ներդրողը) մեկ այլ երկրի ձեռնարկության (ուղղակի ներդրման ձեռնարկության) նկատմամբ ձեռք է բերում վերահսկողություն կամ նշանակալի ազդեցություն:

Ներդրումը համարվում է ուղղակի, երբ ներդրողը ձեռք է բերում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (կամ համարժեքի) առնվազն 10%-ը:

■ Պորտֆելային ներդրումներ

Պորտֆելային ներդրումները ներառում են կապիտալի մասնակցության (օր.՝ բաժնետոմս) և պարտքի հանձնառության (օր.՝ պարտատոմս) արժեթղթերը, որոնք ներառված չեն ուղղակի ներդրումներում կամ պահուստային ակտիվներում:

Պորտֆելային ներդրումներում ներառվող արժեթղթերը սովորաբար կազմակերպված շուկաներում (բորսաներում) առուվաճառքի օբյեկտ են, ինչը ներդրողին հնարավորություն է տալիս կապիտալը մի գործիքից փոխանցել մեկ այլ գործիքի՝ անկախ դրանց ժամկետի հասունացման հանգամանքից:

■ Այլ ներդրումներ

Այլ ներդրումները գլխավորաբար ներառում են վարկերը, այդ թվում՝ առևտրային վարկերը, ինչպես նաև կանխիկ դրամական միջոցներն ու ավանդները:

■ Պահուստային ակտիվներ

Պահուստային ակտիվները բաղկացած են այն արտաքին ակտիվներից, որոնք անմիջականորեն գտնվում են կենտրոնական բանկի վերահսկողության ներքո և կարող են օգտագործվել վճարումների պակասորդը ֆինանսավորելու կամ ազգային արժույթի փոխարժեքը կարգավորելու նպատակով արտարժույթի շուկայում ներխուժումներ կատարելու համար: Պահուստային ակտիվները ներառում են մոնետար ոսկին, հատուկ փոխառության իրավունքը (SDR), արտարժույթային ակտիվները (արտարժույթ, ավանդներ, արժեթղթեր):

Հավելված 1: Ինկոթերմս 2010-ի պայմանները:

	Վերաբերում է տրանսպորտի բոլոր տեսակներին							Վերաբերում է ծովային տրանսպորտին			
	EXW	FCA	CPT	CIP	DAT	DAP	DDP	FAS	FOB	CFR	CIF
	Ex Works	Free Carrier	Carriage Paid To	Carriage & Insurance Paid To	Delivered at Terminal	Delivered at Place	Delivered Duty Paid	Free Alongside Ship	Free on Board	Cost & Freight	Cost, Insurance & Freight
<i>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>	վճարում է	վճարում է	վճարում է	վճարում է	վճարում է	վճարում է	վճարում է	վճարում է	վճարում է	վճարում է	վճարում է
Արտահանման փաթեթավորում	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող
Դրոշմում և պիտակավորում	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող
Արտահանման մաքսային ձևակերպում	Գնորդ	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող
Ներքամաքային տեղափոխում մինչև հիմնական փոխադրողը	Գնորդ	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող
Առաքման տերմինալի ծախս	Գնորդ	Գնորդ	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Գնորդ	Վաճառող	Վաճառող	Վաճառող
Տրանսպորտային միջոցի բեռնման ծախս	Գնորդ	Գնորդ	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Գնորդ	Վաճառող	Վաճառող	Վաճառող
Տրանսպորտի ծախս	Գնորդ	Գնորդ	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Գնորդ	Գնորդ	Վաճառող	Վաճառող
Ապահովագրություն	1	1	1	Վաճառող	1	1	1	1	1	1	Վաճառող
Բեռնաթափման ծախս	Գնորդ	Գնորդ	1	1	Վաճառող	Վաճառող	Վաճառող	Գնորդ	Գնորդ	1	1
Նշանակման տերմինալի ծախս	Գնորդ	Գնորդ	1	1	1	Վաճառող	Վաճառող	Գնորդ	Գնորդ	1	1
Ներմուծման մաքսեր, հարկեր, տուրքեր	Գնորդ	Գնորդ	Գնորդ	Գնորդ	Գնորդ	Գնորդ	Վաճառող	Գնորդ	Գնորդ	Գնորդ	Գնորդ
Առաքում գնորդին	Գնորդ	Գնորդ	1	1	1	1	Վաճառող	Գնորդ	Գնորդ	Գնորդ	Գնորդ

1 – Սահմանվում է առանձին: